

իր նամակը՝ կտաւի կտորը, և սկսում էր հետք
խաղալ, իսկ վերջը լաց լինել:

*
**

Ինդասան սկզբնատուրքան պատմությունը — Գե-
ղատան հայրենիքը Բաղդադն է համարուում: Այդ-
տեղ, դեռ Բրիտանոսի ծննդից 754 տարի առաջ, Ալ-
մանսուր խալիֆան առաջին ղեկապետներ բացել:

Հուտով դրանից յետոյ վրայ հասաւ մի այն-
պիսի ժամանակ, երբ թաղաւորներն անգամ սկը-
սեցին ղեկազորական փորձերով պարապել: Հիւզօ
Մաուրակի նորերս ի յոյս բնծայած „Das Charakterbild
des Apothekers in der Litteratur“ գրքից իմանում
ենք, որ Վամբիւան իր օժանկիքներն ինքն էր
եփում ու պատրաստում իսկ Պերգամացի Ատալն
սպեղանի էր շինում կապարից ու սնգոյրից, Յայտ-
նի է նմանապէս, որ այդ ժամանակուայ ղեկազոր-
ները շատ լաւ գիտէին իրենց արուեստին վերաբե-
րեալ բոլոր նրութիւնները:

Բրիտանոսի ծննդեան ժամանակներից սկսած
արդէն գործադրուում էին նմանարուժական (гоме-
опатія) միջոցները:

Յունաստանում առհասարակ ղեկազորներն
ընդհանուրի յարգանքը չէին վայելում: Լիկուրգոս-
ը մինչև իսկ օրէնք հրատարակեց, որի դօրութեամբ
Լակեզեմենիայից նրանց դուրս քննելն իրենց կա-
տարած մի քանի ամօթալի արարքների համար,
Եպիկուրը գատապարտում էր Արիստոտէլին, որ
նա ղեկազորների այդ անպատուարեք գործովն
էր դրաղուում:

Սակայն ղեկազորների հետ ամենից աւելի
վատ էին վարուում Հուովմում: Օրինակ, Հորացիոսը
նրանց լարախաղացների ու մուրացկանների հետ է
համեմատում:


Գեղազորների անկեալ վիճակի բարելաու-
թիւնը դարձեալ Արևելքի ազդեցութեան պէտք է
վերագրել, որտեղ իրօք կարողանում էին գնահա-
տել նրանց գործունէութիւնն ու հմտութիւնը, Ա-
րարացիները ղեկապետներ ներուպատեղափոխեցին, և
այն ամենից առաջ Սպանիայ, որտեղից անցաւ
Իտալիայ, Արուեստների այս երկրում ղեկազոր-
ների համար էլ ամենափայլուն շրջանն է սկսուում:
Նրանք առանձին համայնք էին կազմում և ունէին
իրենց յատուկ դրօշակն ու կնիքը:

Գերմանիայում ղեկապետների մասին առաջին
անգամ յիշատակութիւն է լինում Թ.Գ. դարի
առաջին կիսում: Իսկ հարաւային և արևմտեան
Գերմանիայում մինչև Թ.Գ. դարը ղեկապետն անե-
լով հասկացուում էր ամէն մի մանրալաճառի իտա-
նութիւն:

*
**

Ի՞նչպէս ունեցնել ծաղկամանների ձիւններին:
— Սենեակներում ծաղիկներ և կամ ուրիշ քնքոյշ
բոյսեր պահողները շատ անգամ խիստ նեղն են
ընկնում և չեն իմանում թէ ինչպիսի միջոցների
գիմեն, որ կարողանան իրենց սիրած ու փայփայած
ծառերն ու ծաղիկներն ազատել այդ ճիճուներից,
որոնք անպայման վնասակար են ծաղկամանների
մէջ աճող բոյսերի համար: Այդ շարիքի գէմ
գործադրուող զանազան յայտնի միջոցներից ամենից
աւելի ուշագրութեան արժանին „Sardin“ լրագրի
առաջարկածն է: Պէտք է վերցնել միւս շագանակ
(վայրենի շագանակ) ու մանր կտրտել և ապա մի
ամբողջ օր թրջոց դնել: Մի գորակ ջրի համար
տասը շագանակ բաւական է:

Այս կերպ պատրաստուած ջրով ջրում են
ծաղկամանները, մինչև նրանց հողը լաւ կշտանայ:
Շաղանակի ջուրը չնչին վնաս անգամ չի կարող
պատճառել նոյն իսկ ամենաքնքոյշ ծաղիկներին,
այն ինչ հողի ճիճուների վրայ ազդու ներգործու-
թիւն է անում: այնպէս որ մի անգամուայ ջրէլը
սովորաբար բաւական է համարում վերջնականա-
պէս նրանց ջնջելու համար: Անմիջապէս ճիճուները
հողի երեսն են դուրս գալիս և տեղն ու տեղը
սատկոտում են:



ՅԵՒՆԼՈՒԹԻ ԱՐԵՐԱՏԻ 1899 Թ. ՅՈՒՆԻՍ.

ՊԱՏՄԱԿԱՆ — ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒԹՄԵՆԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ.

I.

ԽՈՍՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆԻՉ

(Լ. ՂԱՄ).

(Շարունակություն) *

Գ.

Մասնիժոյց պրակի մէջ Խոսրովի զրբի
համառօտ բովանդակութիւնից տեսանք, որ
հեղինակը, որպէս ժամանակակից և գործին
մասնակից անձնա որութիւն, նկարագրում
է պատմական նշանակութիւն ունեցող կա-
րևոր երևոյթներ: Բայց զրական երկերի

պատմական և մատենագրական արժէքը այն ժամանակ կարելի է գնահատել երբ որոշ զտգովար ունենանք տեղի հեղինակի անձնատուրութեան: Եւ ծագման ժամանակի մասին: Տարբազգաբար այդ կէտերից և ոչ մէկի մասին պարզ հաստատուն գալովար չենք ստանում Խոսրովի գրքից: Մեզ մնում է քննադատական զիտութեան ցոյց տուած եղանակներով որոշել այդ կարեւոր հարցերը, առանց որի ինչպէս յիշեցինք: Խոսրովի արժէքը գնահատել չենք կարող:

Տեղի մասին մեր ունեցած տեղեկութիւնն այն է, միայն որ Աթանաս պատրիարքի հրամանով Խոսրովիկ խօսակցութիւն է ունեցել Աթանաս և Թէոդոտոս եպիսկոպոսների հետ «ի դերայիլորոշտաս» և հինգերորդ թուղթն էլ ուղղուած է Գերաղիկոսայ Սարգիս եպիսկոպոսին: Վերջին թուղթը գրելիս նա շատ հեռու չէ Սարգիս եպիսկոպոսից: Ինչպէս տեսանք Բ. պրակի մէջ յիշուած ցուցումներից.* ընդհանուր առմամբ այս երկու վայրերը պէտք է Հայաստանից դուրս Ասորիքում լինին թէ և հաստատ չենք կարող մատնացոյց անել իսկական տեղերը: Հ. Սարգսեան մեզ անյայտ պատճառներով Գերաղիկոս անունը նոյնացնում է Միջագետքի Գերմանիկիս անուն հետ: Յամենայն դէպս երկու վայրերն էլ հեղինակի հայրենիքի հետ կապ չունին:

Չնչին է նոյնպէս մեր ստացած տեղեկութիւնը Խոսրովիկ անձի մասին: Առաջին զլխի վերնագրից գիտենք, որ հեղինակը յայտնի էր Մոսորովիկ թարգմանիչ անունով դուցէ և յետագաներից այդպէս կոչուած: Մա իրեն անուանում է Խոսրով նուաստ ծառայ կամ Խոսրով անարժան ծառայ ինչպէս տեսանք առ Աթանաս պատրիարք և առ Սարգիս եպիսկոպոս ուղղուած թղթերի սկզբնատուրութիւնից**։ Մի ուրիշ տեղ Ա. զլխի մէջ իւր մասին հետեւեալն է յայտնում. «ապա թողցես ինձ ասել որպէս արժան է ասել» զիմում է հակառակորդին— «որ զճմարտութիւնն սիրեցի յամենայն իմ պատուել

կեանս և ուղղափառութեան ի մանկութենէ լինել ըսնի սղատաւոր, այլ և հուստամ ի նոյն ինքն ի ծառայոյն զօրանալով՝ զվասն իւրն իմաստասիրել ինչ յաստուածարանութիւն»։ Այս տողերից կարող ենք եզրակացնել որ նա եկեղեցական անձն էր և հմուտ աստուածարանութեան: Վերջին կէտը լաւ նկատուում է և նորա ամբողջ երկից: Ապա մենք տեղեկանում ենք, որ Խոսրովիկ մասնակցել է Ա. և Գ. զլուխների մէջ յիշուած ժողովին: որ նա հայոց կուսակցութեան պարագլուխն է կամ պարագլուխներից մէկը, բայց զբական որոշ տեղեկութիւն չենք ստանում նոյն իսկ հեղինակի առաջին գէմքով խօսած մասերից:

Խոսրովիկ գրքից դուրս նորա անձի մասին տեղեկութիւն ենք ստանում և երկու յիշատակարանից: Խոսրովիկ երկը մինչև այժմ ամբողջապէս, առանձին չէ զանուած, այլ Անանիա Սանահնեցու և Յովհաննէս քահանայի վիճարանական երկերի հետ միասին և միշտ այսպիսի զաստուրութեամբ. 1. Անանիա վարդապետի ըսն հակաձառութեան ընդդէմ երկաքնակաց, զոր գրեաց հրամանաւ Տեսուն Պետրոսի Հայոց վերադիտողի: * 2. Խոսրովկայ թարգմանչի հայոց եւլն: 3. Յովհաննէս քահանայի յաղաղս նշանակ հաւատոյ նիկէականն ՅԹԸ-իցն իւր մասերով:

* Յիշեալ Պետրոս վերադիտողը Գետազարծ կաթողիկոսն է. սակայն Անանիան իւր զիբքը վերջացրել է նորա յաջորդ Սաշիկ կաթողիկոսի օրով, որին և նուիրել է աշխատութիւնը. «Բայց արդ ատեալ զազքատ իմոց մտաց ընկալցիս զպտուղ, ով գերազարդ և ամենիմաստ հանճարով ալլցեալ Տէր խաշիկ վերադիտող Հայոց մեծաց, փոխանորդ Լուսաւորչին պետ. թէև ոչ զյաւէտ կատարեալն, սակայն ըստ կարի մերում զյօժարութիւն լիպպես ցուցեալ, յաղազս որոյ աղաչեմ ըստ աղքատատուր տրոյ տառապելապետ այբոյն այնորիկ, համարեցին զվարձս շնորհին, ոչ ըստ տրոցն, այլ միայն հարուստ յօժարութեան ընդ քաջահաւատն զովեցաւ յամենեցունց Տեսունէն. ըստ այնմ և զմեր ընկալցիս զսակաւ տուրս երկուս լուծայիցց և եթէ սղալանք ինչ իցեն ի բանիդ ըստ տկար և հոսանուտ բնութեանս մերոյ, ուղղեալք սիրով հոգոյն և կորովահանճար իմաստիւք լցցի պակասն և սղալանքն ծածկեցի ըստ գրոյն, եթէ սէր ծածկէ զբազմութիւն յանցանաց, եւ այնպէս բոլորեցունց արարչին հաճոյսցուք և կամ հանդիպեցուք ի Քրիստոս Յիսուս որում փառք յախտանս ամէն: Այս խօսքերով էլ վերջանում է Անանիա Սանահնեցու երկը:

* Արարատ եր. 214—216.
** Արարատ մայիս. եր. 214—215:

վերջին հեղինակը ինչպէս կոհաններ ժ.Բ. դարում ծագած նշանաւոր Յովհաննէս Սարկաւազ վարդապետն է: Երեք հեղինակների գործերը խմբադրել և մի հատոր է կազմել Յովհաննէս Երզնկայեցին որ զբքի սկզբում դրած նախադրութեան համաձայն գտել է զանազան տեղերում և զանազան ժամանակներում և արտագրել տալով մի գիրք կազմել: Եւստիպիոսի մեջ մեզ գրադեցնող երկի հեղինակը կոչուած է Խոսրովիկ Թարգմաննիչ և հզօր զիտնական: Որքան և փոքր լինի այս տեղեկութիւնը րայց և այնպէս կարեւոր է մեզ համար: Այսպիսով մի երկրորդ վկայութիւն ունինք հեղինակի անուանակոչութեան: և նորա երկի ներկայ խմբագրութեան մասին: Միտարնը կարծում է որ նախադրութեան մեջ յիշուած Յովհաննէս Երզնկայեցի եպիսկոպոսը ժ.Գ. դարում գործող յայտնի անձն էր որ յիշուած է նաև Ժորժորեցի կամ Պլուզ մականուամբ: Սակայն ոչ մի փաստ չէ յիշուած այս կարծեաց հաստատութեան մասին: Հայր Սարգիսեանի հետ մենք ևս հաւանական ենք համարում այս կարծիքը որովհետև ուրիշ Յովհաննէս Երզնկայի ուսումնասէր ինչպէս նախադրութեան հեղինակն էր յայտնի չէ մեզ: Իրև ապացոյց կարելի է յիշել և այն հանգամանքը որ ժ.Գ. դարուց աւելի հին ձեռագիր ներկայ խմբագրութեամբ չէ զանուած: Հ. Սարգսեան կարծում է մինչև իսկ որ վենետիկ Մխիթարեանց մի ձեռագիրը այն խմբագրութեան բնագիրը լինի որ կատարել է Յովհաննէս Երզնկային:

Միւս յիշատակարանը գտնուում է Գիւս

* Նա մեր մատենագրութեան մէջ յայտնի է բաղմաթիւ կանոնական, իրատական, մեկնարանական գրուածներով: Բաղմաթիւ են նաև նորա անունով մեզ հասած տաղերն ու շարականները որոնցից նշանաւոր է մանաւանդ Լուսաւորչի շարականը՝ «Այսոր դուարձացալ, ներբողական մատենագրութեան մէջ շատ նշանաւոր տեղ է բռնում նորա Լուսաւորչին նուիրած ներբող, մանրամասնութիւններ տես Հ. Տաշխանի ցուցակ հայերէն ձեռագրաց եր. 1126 և Զարբանապետ 606—616 Գ. տպ.

Նախադրութիւնը հրատարակել են Աղանեանց, Միտարնի, Արարատ 1892. Գ. և Հ. Տաշխան. Մատմանր. ուս. 58 եր.

քահանայի ձեռագրի մէջ*, որի գրիչը հեղինակի մասին հետեւեալն է պատմում: Երկրորդն է Խոսրով Թարգմաննիչ մեր. զսա ոչ կարացի իմանալ ի դրոյ որ զսակաւս ընթերցայ այլ ի յերեւելի ի նշանաւոր և ի մեծագոյն կարի ծերացեալ եպիսկոպոսէ և յիմաստնապիւր՝ վարդապետէ յուժեմնէ լուայ՝ զու ատենադպիր Բազրատունեաց Թագաւորացն մերոց, իսկ ըստ հաւատոյ և ըստ վարուցն թէ որպիսի ոք իցէ եղեալ նա բանք նորին ակնհիւ ցուցանեն զնա քեզ: Այս տողերի գրողն է ոմն Մարտիրոս սարկաւազ որ 1779 թ. յուսկու դարում գրել է Աղանեանցի ձեռագիրը: Տարաբախտաբար գրիչը չէ յայտնում թէ ի՞նչ աղբիւրից է յայտնել ծերունի եպիսկոպոսը այս տեղեկութիւնը, ուստի և մեզ համար արժանահաւատ վկայութիւն համարուել չէ կարող:

Մեր մատենագրութեան մէջ շատ շնն Խոսրովիկ կամ Խոսրով անունով հեղինակները մանաւանդ որ մեր հետախուզութիւնը պէտք է սահմանափակուի Ե. Ժ.Բ. դարի սկիզբները: Խոսրովիկ Ժ.Բ. դարու առաջին քառորդից յետոյ ապրած լինել չէր կարող այդ մասին արդէն հաստատուն փաստ ունինք: Ամենահինը Ազգար Փարբեցու յիշած** Խոսրովիկ Թարգմանն է, որը պէտք է գրած լինի Ս. Սահակի կեանքը. «Իրեն կրնձայուի դարձեալ ջրօրհնեաց կանոնին Թարգմանութիւնն ի յունէ» և «պատառիկ մը» «վասն կարգի կաթուղիկոսաց»*** Մի ուրիշ Խոսրովիկ որի արձանագրութիւնը—Ծա խոսրովիկ ծառայ սուրբ Հովիտիմէի—գտնուում էր Հովիտիմէի գերեզմանի մատարան որմի վերայ և Փիլիպպոս կաթուղիկոսի ձեռքով 1653 թ. կատարուած նորոգութեան ժամանակ ընդօրինակել է Աւաքել Դուրբիժեցին**** Հ. Ալիշան Այրարատ եր. 238 կարծում է որ կամ Ե. դարու վերոյիշեալ Խոսրովիկ Թարգմանն է կամ Կոմիտասի յաջորդը իրև Հովիտիմէի վանահայր:

* Արձագանգ, 1888. № 5 Տաշխան մատմանր. ուս. եր. 60.
 ** Պատմ. և թուղթ. 1873. Աննետիկ եր. 609.
 *** Զարբանապետ Հ. Գպր. եր. 295. երրորդ տպ.
 **** Պատմութիւն Առաքել վարդապետի Գաւրիժեցոյ Գ. տպ. Աղաղաղապատ 1896. եր. 329.

Չամչեանն ևս յիշում է Մոսորով անունով մէկին հռետոր մականուամբ, որ աղուհացից ճառեր պէտք է զրած լինի մինչև իսկ մի հատուած վկայութիւն է բերում իւր պատմութեան մէջ: * Այդ հատուածից երևում է, որ Մոսորով հաետորը ապրել է եօթներորդ դարու առաջին կիսից յետոյ՝ որովհետև յիշում է յունաց զօրապետների զործ զրած բանութիւնները կրօնական խնդիրների վերաբերութեամբ, որ կարող էր միայն Հերակլի թոնն Կոստանդին կայսեր ժամանակ անդի ունենալ: Իւր ժամանակ այլ ևս Հռոմէները տիրող չեն. «Յերբեմն ժամանակի յորժամ հռոմէք տիրեալ ունէին զաշխարհս մեր և խառն բնակութիւն էր քաղկեդոնականացն ընդ մերսնս...»

Հետոր մականուամբ մի Մոսորով շատ յայտնի անձնաւորութիւն պէտք է լինէր մեր նախնեաց մէջ, որովհետև կրօնական-վիճաբանական դրուածքների մէջ յաճախ յիշուած ենք տեսնում նորա անունը ուղղափառ հայրերի շարքում և երկու հատուած ևս կրկնուում են ս. հարց պրութիւններից մէջ բերուած վկայութիւնների մէջ, որոնցից մէկը արտասպել է Հ. Տաշեան իւր վերոյիշեալ յօդուածի մէջ: ** Չամչեանի յիշած Մոսորով

հետորը և մեր հատուածների հեղինակը անկասկած նոյն են, թէ և զրական հաստատուն փաստեր պահատում են: Երկուսն էլ նոյն մականուններով և քաղկեդոնականութեան հակառակորդ:

Յիշեալներից զատ մեր մատենագրութեան մէջ Մոսորով անունով ամենից յայտնի անձնաւորութիւնը երանաշնորհ Գրիգոր Սարեկացու հայրն է, Անձեակցիաց կայսրպոստը որ պատարագի և ժամադրոց մեկնութիւն ունի զրած: * Միարանի Անանիա Մոկացու թղթերի հրատարակութեամբ և ուսումնասիրութեամբ պարզուեցաւ այն խնդիրը, որ Գանձակեցու ** և Օրբելեանի *** յիշած և Չամչեանի կրկնուած **** Մոսորով քորեպիսկոպոսը, Անանիայի հակառակորդը՝ Անձեակցին է եղիլ իբրև ապացոյց բուական է— Տեսոն Անանիայի Հայոց կաթողիկոսի պատճառ յաղագս զՄոս-

անելի է նորա և միաւորութիւն անքննելի է, նորին Արք ի մարմինն բանին հաւատացին ծանոյց նոցա զատուածութիւնն իսկ որ ասացին թէ մարմինն մարգոյ է և ոչ Աստուծոյ ընդ ուրացոյցն ելցին ի խաւարն արտաքին. Բովմաս զշոշափեալ կողն Աստուած խոտորմեցաւ զնա:

Նոյն ձեռագրի 50^m մ հաւասոյ քրքն խոտորվի Հայոց կաթողիս. Արք տունն Հայոց զսրբատացութիւն սերովբէից ի վերայ որոյն անունն. վասն զի պատուեն զորդին որպէս զառաքիչն նորա ըսմ թէ որ զիս ընդունի զառաքիչն իմ ընդունի. իսկ եթէ անարգանք են ի սրբատացութիւնս յիշել զխաչեցանք որ ի վերայ որոյն զանեմն ապա ի բաց բարձքը զպատարագ խաչին, որ զնէք ի վերայ սեղանոյն ի տաճարին տեսոն և նոյաւ արհնեցէք զանուն չօր և Արգույ և Հոգուոյն սրբոյ, Իսկ մեզ պարծանաց անուն է խաչն ուսեալք ի հրեշտակաց, որ ասէին առ կանայսն մեծաւ պարծանօք առ զխաչելիալն խնդրէք. յարեաւ: Նաև տէրն փառօք իւր կոչէր զխաչն և վասն խաչին ասէ էր հոգիի քանդի Յիսուս չև էր փառաւորեալ, այսինքն է խաչեալ, Եւ Պողոս քնարն Հոգուոյն սրբոյ և բերանն Քրիստոսի ասէ. Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչ, Եւ եթէ բանն խաչին կորուսելոցն յիմարութիւն է:

* Մի այլ գրուածք ևս յայտնի է նորա անունով— Մեծին Խոսրովու ասացեալ յորդորակ խրատական յոյժ պիտանի. Աստանաբ հարկ համարիմ սակաւ ինչ ասել առ այնոսիկ, որք ասննն, զի լսեմ և ոչ տանեմ, ապա բնաւ և ոչ լսեմ, զի մի աւելի սղակեցայց. Տաշեանից ցուց. եր. 768. և Կ. Մարթէ. Сборники Прутчы Вардана I, ер. 289 և 375, Սակայն հաւանօրէն այդ մի հատուած է նորա Պատմ. մեկն.-ից Անեակի, 1869, համ. եր. 8:

** Ասկան Յովհաննիսեանցի հրատ. եր. 47—48.
*** Հաճաղարեանցի հրատ. զԼ. ԾԲ.
**** Պատմ. Հայոց Բ. եր. 818:

* Չամչեան. Պատմ. Հայոց Բ. եր. 609. Մոսորով հետորի անունը յիշում է նաև եր. 348. 607, 608.

** Տաշեան Մատ. մանր ուս. եր. 67. և ցուցակ Հայերէն Ձեռագրաց եր. 396:

№ 1538 ձեռագրից հանում ենք մի քանի ուրիշ հատուածներ ևս, որ նոյն Մոսորով հետորին են պատկանում: Հետաքրքրական է նոյնպէս, որ վկայութիւնների ժողովածուի մէջ նոյն ձեռագրի 50^m մի ուրիշ հատուած կայ խոսրովի Հայոց կաթողիկոսի անուամբ, Բոլորովին անյայտ է մեր կաթողիկոսների շարքում այդ անունով անձը: Ամբողջ թղթի զիւտը գուցէ շատ մութ խնդիրներ պարզէր, նոյն հատուածի և կաթողիկոսի մասին տես Տաշեանի ցուցակ երես 768, 41^m Ի հաւասոյ քրքն հայոց խոսրովի հոկոսի: Մարտի առանց լուսոյ ոչ ասի մարգարիտ, և զարիտ առանց լուսոյ ոչ ասի Քրիստոս Փրկիչ ոչ տէրունականն մարմինն ոչ ասի Քրիստոս Փրկիչ առանց Աստուծոյ բանին, զի ձնունդ չօր եղև ձնունդ կուսին, նորին յես սակաւ. Մի՞թէ մարմինն մարդկայինքն աստուածայինք ոչ ասեն ի Քրիստոս կիրք և ներգործութիւնք և աստուածայինքն մարդկայինք, ապա միաւորութիւն բարձեալ լինի ի միջոց, արդ ընդէր լինիք ի միտս ձեր սուտ և ասէք միածին, նորին յես սակ. Արք որ բնութիւն անհա-

րով նգովելոյն զԱնձեւացեաց եպիսկոպոսն վերնադրով թղթից հեռեկայր մէջ բերել: ՆԳ=954 թուականութեանս և ի ԴԺան ամի մերոյ զիտաւորութեանս յարեաւ ոմն յեպիսկոպոսաց մերոյ Խոսրով անունն որում հաւատացեալ էր մեր նմա զվիճակն Անձեւացեացն այր համեստ և զիանաւոր և աշօք ծերութեամբ զարգացեալ: յանկարծակի իրբ և ի զիւական հոգմոյն շարժեալ, առանց իրիք հակառակութեան սկսաւ նսխ զբարբառ զերակի արձակել ըստ յունարէն լեզուոյն զհիրակէն կիւռիակէ կոչել և զԵրուսաղէմ Եռուսաղէմս և որ սոցին նման է ի սոյն յառեալ բարբառ: Խոսրովի Ա. թղթի հեղինակը չի կարող Անձեւացին լինել, քանի որ հեղինակի բարձրաստիճան հակառակորդը քաղկեդոնական է: Անանիա Մոկային յայտնի է որպէս Հայոց ուղղափառութեան և հայրապետական աթոռի հեղինակութեան ախոյեան:

Սակայն Անանիա Մոկայու թուղթը մեր առաջ մի ուրիշ կարելիութիւն է գնում: Դուցէ մեր Խոսրովիը նորա ժամանակից Խոստորով զիտնականն է: Անանիա Մոկայու «Յաղագս ապստամբութեան ամեն Աղուանից» երկի նկարագրած գէպքերը նոյնպէս յարմար են գալիս Խոսրովի Ա. թղթի հանգամանքներին: որ առաջին բողեկից թուում է, թէ երկու գրուածքներն էլ նոյն ժամանակի և նոյն իրողութիւնների հետ են կապուած: Անանիայի գրուածքներից տեղեկանում ենք, որ Սիւնեաց Յակոբ մեաբոպոլիտը ապստամբել է Հայոց կաթողիկոսի դէմ: ապստամբուած է և Աղուանից Սահակ անուանեալ կաթողիկոսը, որ հակուած էր քաղկեդոնականութեան: Դնչպէս և Աղուանից Իշխանակ թագաւորը: Յակոբ և Սահակ ոչ հաւանելին գալ ի միութիւն ժողովոյն: Բայց գրում էին, «եթէ Հաւանեալ եմ ես Սահակ Աղուանից կաթողիկոս և սա՛ Յակոբ Սիւնեաց եպիսկոպոս՝ զով և զուրք քրիստոսապակեալ թագաւորքդ և սուրբ եպիսկոպոսունքդ ձեռնադրէք յաթոռ սուրբ Լուսաւորոյն՝ ծառայել: Յակոբը կրկնում է իւր խոստումը, երբ կաթողիկոսը 943 թ. Սիւնիք էր գնացել, միաբանութեան նպատակով: Երբորդ անգամ կաթողիկոսը գնում է 949 թ. և ժողով է

գումարում. Ժողովի մէջ երկպառակութիւն է ծագում Սահակի յաջորդ Գագիկի կաթողիկոսութեան մասին (Անանիայի թղթերը և Միարանի ուսումնասիրութիւնը Արարատ, 1897. փետր. մարտ և յունիս):

Այս հանգամանքներն ինկատի առնելով՝ կարելի է կարծել, թէ Խոսրովի Ա. թղթի մէջ նկարագրած ժողովը, հէնց Անանիա Մոկայու ձեռքով գումարած ժողովն էր: Մանաւանդ որ Ա. և Դ. թղթերի մէջ յիշուած ժողովները ըստ երևութիւն տարբեր են միմեանցից: Ուրեմն և այս ենթադրութիւնն անելու արդիւք լինել չէ կարող այն հանգամանքը, որ Դ. թղթի մէջ յիշուած ժողովի պատճառներից մէկը Անտիոքի Աթմանաս պատրիարքն է և ժողովին ներկայ են եղել նորա երկու ներկայացուցիչները, այն ինչ Անանիայի թղթում այդ մասին յիշատակութիւն չկայ: Բայց այստեղից էլ մի նոր խնդիր է ծագում— Խոսրովի գրութիւնների միութեան խնդիրը: Արդե՞ք բոլոր 5 թղթերն էլ մի հեղինակի գործ են, թէ ոչ, այս կասկածը փարատելու համար Խոսրովիայ թարգմանչի հայոց ընդհանուր վերնադիրը բաւական չէ. քննադատական միջոցներով հարկաւոր է պարզել և այս խնդիրը: Յիշեալ անձնաւորութիւններից ո՞րը կարող է լինել մեր երկի հեղինակը: Այս հարցի պատասխանը կարող ենք ստանալ միայն հետզհետէ, երբ կքննենք Խոսրովի ծագման ժամանակը և միւս հեղինակների հետ ունեցած մտանազրական առնչութիւնը: Այժմ պարտաւոր ենք լուծել Խոսրովի միութեան խնդիրը, որովհետեւ գրութեան ծագման ամենապակ և ամենաուշ ժամանակի—terminus post quem et terminus ante quem—որոշումը մեծ կապ ունի այս խնդրի լուծման հետ:

Գ. Վ. Յովսէփեան.
(Կր շարունակուի)

